

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարեկանը 6 րուբլ
Սուսնին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբարբաջիք դիմում են ուղղակի
Тифлис. Редація „Мусако“.

Խմբագրատունը բայ է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Մարտի լեզու: Ներքին տեսութիւն: Նամակ Գանձակից: Ներքին լուրեր: Սրտաքին տեսութիւն: «ԳՕԼՈՍՏ» լրագրի թղթակցութիւնը: Հայաստան: «Մշակի» հետազոտներ: Յայտարարութիւններ: Բանասիրական: Նամակ Բագուից:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ

Մենապայծառ օրինակ այն ճշմարտութեան, որ ազգութիւնը գլխաւորապէս մայրենի լեզուի մէջ է, մայրենի լեզուով է պահպանվում, կարող է մեզ համար լինել Ունգարիան:

Յայտնի է որ ունգարացիները մի վայրենի ֆիննական ցեղին պատկանող ազգ են, որոնք եկան Եւրոպա Ասիայի խորքերից և զետեղվեցան Եւրոպայի այն երկրի մէջ, որ այժմ Ունգարիա է կոչվում: Յեղով նրանք տարբեր էին բոլոր եւրոպական ազգութիւններից, կրօնով նրանք կուսակաշտ էին, նրանք կորցրին իրանց առաջվայ հայրենիքը, Ասիայի խորքերից, Եւրոպա տեղափոխվելով: Եւրոպա գալով նրանք ընդունեցին կաթոլիկութիւնը: Ուրեմն նրանք փոխեցին

համարները, համ էլ իրանց կրօնը, — բայց դարձեալ պահպանեցին իրանց ազգութիւնը: Այդ բաւական է: Այժմեան անտրոպոլոգիական գիտութիւնը ապացուցեց, որ այժմեան ունգարացիները այլ ևս չեն պատկանում իրանց արիւնով այն հին ցեղին, որ գաղթեց դէպի Եւրոպա, այլ խառնվելով իրանց շրջապատող եւրոպական ազգերի հետ, ունգարացիները այժմ ցեղով եւրոպացիներ են դարձել:

Բայց չը նայելով որ թէ հայրենիքը, թէ կրօնը, թէ ցեղը փոխվել է այդ ազգութեան մէջ այնու ամենայնիւ ունգարացիները պահպանեցին իրանց ազգութիւնը միմիայն իրանց մայրենի լեզուի շնորհով և ունգարացիք են մինչև անգամ իրանց երկրում ապրող և իրանց շրջապատող գերմանացիներին և սլավոններին:

Որքան, ուրեմն, մեծ դեր է խաղում մայրենի լեզուն: Այն ազգութիւնը որ պահպանել է իր մայրենի լեզուն, նա

կը պահպանի իր ազգութիւնը, թէ կուզ փոխեր իր կրօնը և փոխեր իր հայրենիքը:

Ի հարկէ կրօն փոխելը անպատճառ հարկ չը կայ, բայց երբ որ մի ազգութիւն հաւատացած է որ կրօնի մէջն է միայն իր ազգութիւնը, բայց մի և նոյն ժամանակ արհամարհում է և մոռանում է իր մայրենի լեզուն, ինչպէս այդ պատահել է, օրինակ, Վրաստանի հայերի հետ, — այն ժամանակ ազգը վտանգի մէջ է գտնվում կորցնել և իր ազգութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳՕՆՁԱԿԻՑ

Սեպտեմբերի 10

Միացեալ Ընկերութեան անուամբ ժողոված են իմ բարեկամները 29 ր.: Ուղարկելով ձեզ այս դուստր, խնդրեմ խնայարար հասուցանել յիշեալ ընկերութեանց հայոց, տպելով նուիրաբար անուններն ձեր պատուական թերթի մէջ:

Գրիգոր քաջանայ Թումանեանց 2 ր., Օսանէս Տէր-Ներսէսեանց 5 ր., Գրիգոր Բասախեանց 5 ր., Ալիստիս Նումանեանց 2 ր., Մարտիրոս Նաբաթեանց 10 ր., օրիորդ Հովհաննէս Նաբաթեանց 5 ր.: Ընդամենը 29 ր.: Նա այս նամակիս հետ ուղարկում եմ նաև 32 ր.: Խնդրեմ խնայարար

հասուցանել Վան քաղաքն, սրբազան Խրիմեան Հայրիկին, վասն հիւանդանոցի Վան քաղաքի, տպելով ձեր լրագրի մէջ նուիրատուաց անուններն: Բժիշկ Արտեմ Համասիլու 10 ր., Մարտիրոս Նաբաթեանց 10 ր., Գրիգոր Բասախեանց 5 ր., Օսանէս Տէր-Ներսէսեանց 5 ր., Գրիգոր քաջանայ Թումանեանց 2 ր.: Ընդամենը 32 ր.:

Մարտիրոս Նաբաթեանց

ՆԵՐՔԻՆ ԱՌՈՒՄԵՐ

Այս օրերս հրատարակեցաւ Թիֆլիսի մէջ, Կիսարոս Կառավարութեան տպարանում դոկտոր Գրիգոր Արծրունու դասախոսութիւնը «Սովորութիւնաց Հայաստանի մէջ» գերմանական թարգմանութեամբ: Դասախոսութիւնը թարգմանել է պ. Աբրահամ Ամիրխանեանց: Բրոշյուրի վերնագիրն է «Die Hungersnoth in Turkisch-Armenien» և ծախվում է թէ «Մշակի» խմբագրատան մէջ և թէ «Կենտրոնական գրովաճառատնոցում»: Բրոշյուրի գինը 20 կոպէկ է:

Մեզ հաղորդում են, թէ Կոնստանդուպոլիսում է մի երիտասարդ, որը ձեռնարկ է արան Լազարեան ձեռնարանում աւարտած, և դանակի գիւղերում վարժապետի պաշտօն ընդունելով, մի քանի ամիս ծառայում է, և միտարկայ ուսմիկը ստանալով փախչում է: Մի և նոյն պարտը մի գիւղում իրան ձեռնարկ էր ակցիզի չին ու վնիկ, վերջը խորեղութիւնը յայտնիելով սաստիկ ձեռք էր կերել գիւղացիներից:

Մի երիտասարդ ներկայանում է ՕՂՆՈՑ ուսումնարանի հոգաբարձու տէր Տ. Ա. քաջանային և խնդրում է վարժապետի պաշտօն: Հոգաբարձու տէր հայրը պատասխանում է, թէ այդ պաշտօնը կը ստանայ այն ժամանակ, երբ բոլոր հոգաբարձուներին մի լաւ ճաշ կը տայ: Երիտասարդը մի կիտան խանան երից մէկի մէջ ճաշ է պատրաստել տալիս և հրաւիրում է բոլոր հոգաբար-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԲԱԳՈՒԻ ՄԱՐԿԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» մէջ ոչ սակաւ անգամ քննված է և զի Բագուի «Մարգարիտական ընկերութեան» գործունէութիւնը: Իսկ ես այս անգամ իմ կողմից պիտի աշխատեմ մի փոքրիկ լայն ձգել այդ հիմնարկութեան մի քանի մթին կէտերի վրա:

Մի կողմից գործունէութեան խիստ ընդարձակ նպատակ, միւս կողմից, ամենաչինար արդիւնք որին կարողացել է հասնել ընկերութիւնը — ահա այդ է, որ շատ զարմացնում է ամեն մէկին, որոնք հետաքրքրվում են ծանօթանալ նրա գործունէութեան հետ: Ընկերութեան նպատակն է տարածել կրթութիւնն Ռուսաց Կայսրութեան հայ ժողովրդի մէջ: Ինչպէս երևում է, աշխատութեան այդ սահմանը խիստ ընդարձակ է, և մեր հասարակութեան պէտքերի վերաբերութեամբ կատարելապէս բաւականացուցիչ է: Բայց գործի մէջ երևում է, որ ընկերութիւնը իր գոյութեան տանտնապետը ընթացքում հիմնել է միայն երկու դասատուներից բաղկացած մի դպրոց, որի կազմակերպութիւնը ներկայացնում է հակամանկավարժական չափազանց թերութիւններ, և բացի այս դպրոցից, իր ծախքով պահում է երկու — երեք թօշակուր աշակերտներ բարձր ուսումնական հիմնարկութիւններ և վարժապետական սեմինարիաների մէջ: Դա մի իրողութիւն է, որ ուղարկութեան արժանի է, և աւելի զարմացնում է մեզ այն պատճառով, որ մի և նոյն նպատակ ունեցող հիմնարկութիւնները թուրքական Հայաստանում արագութեամբ յառաջադիմութիւն են անում և աւելի

համարութիւն են գտնում մեր մէջ: Մինչդեռ մերը շատ անգամ մոռանում ենք, թէ «Մարգարիտական ընկերութիւնը» գոյութիւն ունի մեզ մօտ: Մեզ կը հարցնեն արդեօք ի՞նչ է ընկերութեան մի այսպիսի անշարժութեան պատճառը: Այդ հարցին պատասխանելու համար պէտք է բացատրել ընդհանուր պատճառները, որոնք առհասարակ աւելի են լինում այս տեսակ հիմնարկութիւնների անաղոթութեանը: Առաջին տեղը այդ պայմանների մէջ բռնում է ընկերութեան գործերը կառավարող ընդունակ մարդիկների բացակայութիւնը, որոնք ուղիղ կերպով հասկացած լինէին ընկերութեան նպատակը:

Սկզբից խորհրդի անդամներ ընտրված են եղել ընկերութեան հիմնողները, որոնք կոչվում են հպատակաւոր անդամներ, և այս կոչումը վստիւում են միայն այն պատճառով, որ նուիրել են փողերի բաւական նշանաւոր մի գումար: Այսպիսով, ոչ մի թարմ մարդ, ոչ մի ներկայացուցիչ ինտելիգենցիայի, որոնք փող չէին նուիրած, և չէին կարող յայտնվել ընկերութեան կառավարչների շարքում: Շատ պարզ է, որ գործի կառավարութիւնը պիտի ընկնէր մեռած ձեռքերի մէջ:

Լինելով ըստ մեծի մասին անկիրթ վաճառականներ, և իրանց հայեցողութեան կէտից նայելով մի բարեգործական հիմնարկութեան վրա, դրանք վճռեցին իրանց երկու դասատուից բաղկացած դպրոցը բայց անկէ Բագուի մէջ: Այդ միտքը այն կողմից աւելի նպաստաւոր էր նրանց համար, որ դրանով խորհրդի և ընկերութեան անդամները կազմալուծվեին իրանց որդիները գիմնազիա ուղարկելու պէտքարութիւնից, ուր ուսում վերցնցնելու համար պէտք էր գտնել եօթ տարի, իսկ իրանց բայց արած դպրոցում երկու տարեկան մէջ նրանց որդիները ձեռք կը բերէին այնքան գիտութիւն, որ բաւական

կը լինէր նոստել խնամութեամբ և անգրագէտ կերպով նշանակել վաճառքների ծախսը: Այստեղից հասկանալի է վարժապետների ընտրութիւնը, որոնց մեծ մասը դուրի են լինում մինչև անգամ պրոգրիմալիստի վիշակաւոր: Այստեղից յայտնի է և այն, թէ ինչու մի այնպիսի ինքն ըստ ինքեան գեղեցիկ հիմնարկութիւն, որպէս է դպրոցը, չէ թողնում որ և իցի իրական ձեռքեր, և ժողովրդական դպրոցների տեսչութիւնը ամեն անգամ անհրաժեշտ է համարում ցոյց տալ նրա հակամանկավարժական գրութիւնը: Ինք կը հարցնէք, թէ ի՞նչ էր շինում մինչև այդ ժամանակ ինտելիգենցիան, և ի՞նչ էր անում ընդհանուր ժողովրդը: Ինչ որ վերաբերում է առաջինին, սկզբում նա գործին չէր մասնակցում, բայց երբ որ այդ օգտաւէտ գործը ընկաւ նրա ձեռքը, այն ժամանակ իր սովորական ծուղութեամբ սկսեց ձանձրնալ, սկսեց տաղտկանալ և նոյն ծուղութեամբ շարունակում է մինչև այսօր: Իսկ ընդհանուր ժողովրդը, որ բաղկացած էր մանր վաճառականներից, չէր համարձակվում ձայն բարձրացնել իր բարեբարների (հիմնադրների) առջև, և այսպիսով ընկերութիւնը տարեցտարի քայքայ էր տալիս իր գոյութիւնը, առանց հասարակութեան ուղարկութեան և առանց ինտելիգենցիայի մասնակցութեան:

Խորհրդի անդամների թուում կանոնադրութեան համաձայն նրանք ինն հոգի պէտք է լինեն) այժմ դժուար չէ գտնել կրթված մարդիկ, որոնցից մէկը, օրինակ, կարելի է համարել պ. Մտոնովին (Նախկին ազատամտ մանկավարժը, յետոյ հայտարար միջնարդ — Мировой посредник — իսկ վերջը գաւառապետ) որը աւարտել է Մոսկովայի համալսարանում: Բայց ճշմարիտն սառած, ևս այն կարծիքի եմ, որ շուտով կարելի է հաւատալ այն տեսակ մարդիկների անկեղծ անձնատիրութեանը

դէպի ժողովրդական կրթութեան գործը, որպիսի ներս են Առաքել Մատուցով կամ Մատաթով, որոնք իրանց սեպական հակազդողութեամբ այն հետևանքին են հասել, թէ անհրաժեշտ է նպաստել «Մարգարիտական ընկերութեան» գործին, — քան թէ հաւատալ ինտելիգենցիայի զանազան կեղծ ներկայացուցիչներին, որոնց համար ամեն գործ խորթ և օտար է, և թէ նրա մէջ անձնական շահ չը կայ: Իրանց կողմ երբ կը գրված է: Գործի համար պէտք են այժմ նոր և աւելի թարմ ուժեր: Իսկ չին տեսակի գործիչները, ժամանակ է, որ բոլորովին հպարտական տան: Լուսաւորութեան գործը պէտք է գտնվի ինտելիգենցիայի ձեռքում, բայց ոչ թմբած, մեռած ինտելիգենցիայի ձեռքում, այլ — կենդանիների: Մի ուրիշ էական պատճառ, որ արգելում է ընկերութեան գործի օրինաւոր ընթացքը, — այդ կանոնադրութեան թերութիւնն է, որը ոչ սակաւ անգամ խորհրդի անդամներին շինութեան մէջ է գցում և դժուարացնում է գործողութեան ազատութիւնը:

Այսպիսի թերութիւններից մէկը կարելի է համարել կանոնադրութեան այն յօդուածը, որի հիման վրա ընկերութեան ընդհանուր ժողովը կարող է կազմվել իւրաքանչիւր տարի միանգամ միայն, ընդհանուր հարցեր քննարկելու համար, — մինչդեռ Ռուսաստանում բարեգործական նպատակ ունեցող բոլոր հիմնարկութիւնները, ընդհանուր ժողովը հարկաւոր վերաբերութեամբ, դրված են ընկերութեան նախագահի և խորհրդի կազմի ներքոյ, որոնց իրաւունք է արված նշանակել ընդհանուր ժողովներ, երբ և հարկը պահանջելու լինէ:

Այդ յօդուածը աւելի արգելաւորի է լինում գործի կանոնաւոր ընթացքին, և թէ ինկառն անհնար է այն զանգամանքը, որ տարեկան ժողովներ լինէ սովորաբար կարող են անդամների հա-

ձաներին, որոնց չես լինում է և տէր չայրը: Ծաղի ժամանակ բաժանելու են դատարկում, երկուստար- դին յաջողութիւն են մտղթում, բայց միւս օրը նրան չեն ձանաչում: Ահա մեր գիւղական դպրոց- ների վարժապետները և նրանց հոգաբարձուները:

ՇԱՄՍԻՈՒՑ մեզ գրում են. սխալ են այն տե- դեկտեմբերները, իբր թէ այդ քաղաքի չեռադրա- տան պաշտօնականը զեղծութիւններ են գործում ի- րանց պարտականութիւններին մէջ. ընդհակա- ուսին, նրանք շատ խղճմտաբար են կատարում ի- րանց ծառայութիւնը:

ՇՈՒՇՈՒՑ գրում են տեղային հոգ. դպրոցի տե- սուհ ա. Մանգինեանցը բաւական նոր բարեկար- գութիւններ մտցրեց դպրոցի մէջ, թէ ժողովուրդը և թէ հոգաբարձութիւնը շատ գոհ են:

Վ. ԱԳՈՒՎԻՍԻՑ գրում են. տեղային երկուս- տարի տեսուհ ա. Ռուսիկեանց խիստ դժգոհ է հասարակութիւնը. շատերը կամենում էին նրան այս տարի չեռապնել իր պաշտօնից, բայց պ. տե- սուհը բաւական շահագէտ պայման է կապի հոգաբարձութեան չես երեք տարի ժամանակով, եթէ արձակելու լինեն, հոգաբարձութիւնը պար- տաւոր է երեք տարիների ուժովը միանգամից վը- ճարել. իսկ տարեկան ուժովը 1800 ռուբլի է: Բայց եթէ պ. տեսուհը հրաժարվելու լինի, ապա տ է: Կա պայման է:

ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎԻՑ գրում են. տեղային գեր- յաջողը դիտարկութիւն ունի հրաժարական տալ իր պաշտօնից: Այդքանորայօցոց համար մեծ կո- ռուստ կը լինէր այդ, եթէ գեր. հայր սուրբը կը թողնէր այդ քաղաքը: Նա կարողացաւ իր խաղա- դասը և խոչնդ բնաւորութեամբ չին խռովու- թիւնները չանգտացնել և անհաշտ կուսակցու- թիւնները միաբանեցնել:

ՂՈՒԲԱՅԻՑ գրում են, որ այս քաղաքում բաց- վեցաւ հաշտարար միջնորդի (Мировой посред- никъ) կանցկարեաւ. գործերը խիստ դանդաղ են ընթանում. կարուածատեր թուրք բէկերի մէջ մեծ դժգոհութիւն է տիրում:

ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎԻՑ գրում են. քաղաքի դե- պուտատը, որը մի և նոյն ժամանակ կապալառու հայեթայեթ է, շատ թանգաքնում է կենսական ան-

չիւնները և աշակերտների առաջադիմութիւնը միայն: Այդ սրբելը պէտք է չեռապնել, փոխելով յիշուս յօրուածը նոյն մտքով, որպէս ընդունված է դա միւս չաման ան չիմնարկութիւնների մէջ, որ այժմ գոյութիւն ունեն Ռուսաստանում:

Կանոնադրութեան խոր թերութիւնները մէկն էլ աւելք է չամարն այն, որ նրա մէջ պարզ և մանրամասն կերպով չ'ցայց արված դպրոցներ բաց անելու նպատակները: Օրինակ, կանոնադրու- թիւնից չէ երևում, արդե՞ք դպրոցները միայն գը- րագիտութիւն ուսուցանելու չափով պէտք է սա- ջմանված լինեն, թէ նրանք պէտք է լինեն շարժա- կան դպրոցներ *), այն կանոններով, որ ընդուն- ված է դպրոցների համար առհասարակ. այսինքն պահանջվում է արդե՞ք ամեն անգամ առանձին թղթուղթիւն ստանալ նշանակված տեղերից այդ դպրոցները բաց անելու կամ տեղափոխելու հա- մար: Թէ այսպէս, թէ այնպէս, ինձ միայն թուում է, որ հայոց ժողովուրդը անկի մեծ պէտք ունի շարժական դպրոցների և գրագիտութիւն ուսու- ցանելու նպատակով սաջմանված դպրոցների մէջ: Իսկ այդ տեսակ դպրոցների բացման իրաւունք ստանալու համար գործ դրված երկար բանակցու- թիւնները կարող էին միայն մնասիլ գործին: Կա- ռելի էր այնպէս կարգադրել, որ ընկերութիւնը ազատ լինէր իր գործողութեան մէջ և միայն տե- դեկտեմբերն տար նրանց բացման մասին, ուր որ հարկն էր:

Կանոնադրութեան մէջ նոյնպէս չէ բացատրված կանխորոշումների նշանակութիւնը իրանց պաշտօնի վերաբերութեամբ: Այդ շփոթութիւնը շատ ան- *) Շարժական դպրոցներ կան, օրինակ, Եվե- դիայում, որանք միայն ժամանակակարգային չիմն- վում են այս և այն հասարակութեան մէջ դրա- գիտութիւն սովորեցնելու նպատակով, յետոյ տե- դափոխվում են:

հրաժեշտ պիտոյնները, մեծ մասը ինքն գնելով, որ իր յանձն առած կապալների պարտաւորու- թիւնները կարողանայ կատարել: Դու՛մայի մէջ բո- ղը յարուցվեցաւ պ. դեպուտատի վրա, բայց ո- չինչ չեռանքի չը հասաւ:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են, որ տեղային դպրոց- ների վարժապետներից մէկը այս տարի քննու- թիւնների ժամանակ աշակերտներից ընդունում էր մէկ գուլն շաքար կամ մէկ ֆունտ թէյ, նրանց լաւ թուանշաններ նշանակելու համար: Այս պատ- ճառով աշակերտներից ոմանք զրկվեցան լաւ թուանշաններից, որոնք վարժապետի պահանջը չը կատարեցին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՐՈՍՈՇԵ» ԼՐԱԳԻՐ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«ՐՈՍՈՇԵ»-ի մէջ կայրում ենք հետեւեալ թղթակցութիւնը: Թէպէտ մի քանիսը նա- խագուշակում էին մինիստրական մօտուսոր քփուարութիւններ, բայց ոչ որ չէր կար- ճում, որ Սայիդ-փաշա առաջին մինիստր կը նշանակվի Սա նոյն Սայիդ-փաշան է, որ առաջին մինիստր եղած ժամա- նակ ամենեւին ուշադրութիւն չէր դար- ձնում Ֆրանսիական դեսպան Յուրիկի վրա: Սա նոյն Սայիդ-փաշան է, որ անա- մութարար թոյն գործածեց հայոց պատ- րիարք Ներսէսին պատժելու համար: Սա նոյն Սայիդ-փաշան է, որ իրան սեփակա- նացնելով իր ստորադրեալների ահագին ու- ձիկը, նրանց մէջ այնպիսի անկարգութիւն յարուցեց, որ նրանք լոյս ցերեկով շրջա- պատեցին մեծ վիզիրի պալատը և պահան- ջեցին իրանցից գողացած ուձիկը: Այսպիսի մարդու ձեռքին է այժմ Թիւրքիայի վիճակը միայն այն պատճառով, որ սա ուրիշներից աւելի դուրեկան է իր տիրոջը մեծ ընծա- ներով և Արքու՛շամուրի պակասութիւն- ներին շողորթելով:

Թիւրքերի տէրը չափազանց ինքնատէր մարդ է և անկարող է հաշուել այն մտքի հետ, որ մարդարէի փոխանորդը կարող է

գամ պատճառ է լինում, որ շատերի խնդրու- ները իրանց ժամանակին չեն կատարվում և առ- շատաբալ գործի առաջադիմութիւնը արգելքների է զանդիպում: Շատերը խորհրդի անդամներից ա- մեն տարի գնում են Ռուսաստանի տօնավաճառ- ները, այդ միջոցին կանգնեալների բացակայու- թեան պատճառով, հարեցող մի քանի ամիս մը: Նո՛ւմ են առանց վճարելու, որովհետեւ նիստերը չեն կայանում և վճիռները ասորիին են համարվում, ե- թէ անդամներից գոնէ ճիշդը ներկայ չեն: Այսու- ամենայնիւ, այդ անկարգութիւնների մէջ կարելի է մեղադրել ոչ այնքան կանոնադրութիւնը, որքան խորհրդի անդամներին: Այդ վիճիւններից կարող էին օգուտ քաղել իրանց տրված իրաւունքներից և առավարելի ընդհանուր ժողովին ընտրելու կան- դիդատներ, որանով նրանք միջոց կը տային ըն- կերութեան գործերի կանոնաւոր ընթացքին: Սա թողնում եմ կանոնադրութեան ուրիշ շատ մանր թերութիւնները, որոնք նոյնպէս կարօտ են փոփո- յութեան, բայց մի բան չէ կարելի առանց ու- շադրութեան թողնել: Ամբողջ տասն տարվայ ըն- թացքում, ընկերութեան անդամները և նրա կա- ուովարիչները, իրանց ազիտութեան պատճառով, չեն հասկացել կանոնադրութեան միտքը, տալով նրա դանազան յօրուածներին սխալ բացատրու- թիւն, և այսպիսով իրանք կաշկանդել են իրանց գործունէութիւնը, ինչպէս այդ եղել է փողերի ծախսելու իրաւունքի վերաբերութեամբ: Այս տե- սակ չիմնարկութեան մէջ, շատ հասկանալի է, որ կանոն լինել չէ կարող: Սրինակ, ինչպէս էին բա- ցատրում կանոնադրութեան յօրուածներից մէկը միտքը, ասված է. «Թորհրդի անդամները իրաւունք չունեն մի որոշ ժամանակի ընթացքում, որ նշա- նակված է ընդհանուր ժողովից, ծախ- սել պատուաւոր անդամների մէջ բերած փողերը

կախու՛մն ունենալ արհամարհելի քրիստո- նեաներից, որոնց թաղաւորները դեռ մի դար առաջ հազիւ հազ արժանանում էին «բէյի» կոչմանը այժմեան սուլթանի նա- խորհրդից: Իսկ այժմ այդ բէյերը համար- ձակվում են ուղղափառների մեծ խալիֆին հրամաններ և օրէնքներ տալ նրա վարմունքի մասին իր սեփական հպատակների հետ: Ծերունի և ազնիւ Մահմուդ-Նեդիմ-փաշա, լաւ իմանալով, թէ ինչպիսի կորստաբեր հե- տեանքներ կարող են ունենալ պետութեան համար սուլթանի այդ երկխոսական ցնորք- ները, ձշմարիտ բարեկամի և ազգասէրի համարձակութեամբ համոզում էր սուլթա- նին չընդգրկմանալ Եւրօպայի կամքին: Բայց այդ խորհուրդները աւելի էլ թունաւո- րում էին սուլթանի ինքնասիրութիւնը, որ իր պալատականի խրատներից ձանձրացած, վերջապէս ասաց նրան. «Ծերունի դարդա» (ակ- ուս) բաւական ձանձրացրի ինձ քո յի- մար խրատներով»:

Սայիդ-փաշային էլ հէնց այդ էր հար- կաւոր: Հաւատարիմ ներքինից իմանալով, որ սուլթանի և նրա յարգելի ամիւփա- շայի մէջ սե կատու է անցել, Սայիդ-փա- շա ստանալի նման մօտեւում է սուլթա- նին, առաջուց այնպիսի խօսքեր պատրաս- տելով, որոնք կարող էին ազդել սուլթանի հիւանդ ուղեղի վրա: Եւ նա աջողութիւն ունեցաւ տեսնելով սուլթանին միայն և տխուր, մինչև դեռ ինքը գլուխ տալուց յե- տոյ, ձեռքերը խաչած նա կանգնեց դրան մօտ և իր տիրոջ նման տխուր ձեւացաւ:

— Էր, Սայիդ, ի՛նչ լաւ բան կայ: — Կարող եմ արդե՞ք համարձակվել լաւի մասին մտածել, մեծ խուճկար (Մահմուդի փոխանորդ), քանի որ իրականութիւնը ձեռ սրբութեանը այդքան տխուր է երևում, ա- սաց խորամանկ Սայիդը: — Այո, այո, Սայիդ, ե՛րբ պէտք է վեր- ջանայ այդ գարշելի քրիստոնեաների իշխա- նութիւնը ինձ վրա:

— Հէնց որ կը կամենան ձեռ սրբութիւնը և ձեռ վեքիլները, պատասխանեց եռանդով խորամանկ փառասէրը:

Դրանից յետոյ Սայիդ-փաշա ամենահան- զառայնող եղանակով սկսեց մեկնել սուլթա- նին այն նախազի՛ծը, որի օգնութեամբ կա-

րելի է ազատվել ոչ թէ միայն յայնաների, այլ և եւրօպական գեաւորների պահանջ- ներից: Եւ այդ նախազի՛ծ: Համեմատ սուլ- թանը պէտք է կատարելագոյն արհամարհէ Եւրօպայի պահանջները: Այսպէս պա- տրաստվեցաւ Սայիդ-փաշայի մեծ վեքիլու- թիւնը, որ սուլթանից ուրախ վնաց իր ստեն:

Իշխանութիւնը ստանալուց յետոյ Սայիդ- փաշա իսկոյն սկսեց հանգստացնել թիւր- քաց հասարակական կարծիքը և շողքոր- թել ղեսպաններին, բայց այնուամենայնիւ այստեղ ամենքը Սայիդ փաշայի իշխանու- թիւնը երկարատեւ չեն համարում: Հէնց որ սուլթանը կը տեսնի, որ գործերի դրու- թիւնը չէ փոխվում և Եւրօպայի պահանջ- ները նոյնն են մնում, Սայիդ-փաշա իսկոյն կընկնի: Իսկ եթէ ծովային ցոյցը շուտով կատարվի, առաջին պատերազմական նաւի շարժումները Սայիդ-փաշայի ամօթայի ան- կման պատճառ կը դառնայ:

Սայիդ-փաշա իր «Վակիթ» լրագրին թե- լաղերց այժմ արդէն տպված հետեւեալ տու- դերը: «Սայիդ և Բեկեր փաշաների նորին մեծութեանը արած գեղեցման համեմատ, Փոքր-Ասիայի նահանգների մէջ անյապաղ կը սկսեն գործադրել վերանորոգութիւնները: Նոյն փաշաների առաջնորդութեամբ այլ- պիսի բարերար վերանորոգութիւններ կը մտցնվեն նոյնպէս կոյսերութեան այլ մա- սերում: Առ ժամանակ մի կամ երկու մաս- նաժողով կը նշանակվի, որին կը մասնակ- ցեն Կերմանկայից հրաւիրված գործին ծա- նօթ անձեր: Այդ մասնաժողովը կը հսկի, որ վերանորոգութիւնները խստութեամբ կատարվեն: Այսպիսով Կերմանկայից կանչ- ված «ամբողջ Եւրօպայի յայտնի» պետա- կան երեւելի վերանորոգիչների հասնելուն պէս կատարեալ համաձայնութիւն կը տիրէ իր միլիտանոր երկեսաների մասին ամենա- հոգաւոր հայր, սուլթանի և նրա հպա- տակների մէջ: Սայիդ-փաշայի բառ առ բառ թեւադրած այս յօդուածից կարելի է իմանալ, թէ նոր մեծ վեքիլը ի՛նչպէս է ցանկանում ի նկատի առնել այն նախազի՛ծը, որ տրվեցաւ Բ. Կրանը դիւսպաններին միա- ձայն գրութեամբ չընթողօրցիւններին, յոյ- ներին և հայերին հանգստացնելու համար:

Կատարն այն է, որ նրանք պէտք է ի նկատի ու- նենան այն մեծ պատասխանատուութիւնը, որ յան- ձնն են առել ամբողջ հասարակութեան առջև: Ա- ջնիւ առիթ չը կայ ընկերութեան կառավարիչներին ժրատ լինել և երկիւղ իրել ծախսերից, թէ և զղու- շութիւն հարկաւոր է: Նրանք, վերջապէս, պէտք է հասկանան, որ իրանց գործի յառաջադիմութիւնը կախված է հասարակութեան համակրութիւնից. իսկ հասարակութեան համակրութիւնը կարելի է գրաւել այն ժամանակ միայն, երբ նրան ցոյց կը տրվեն գործունէութեան շրջա ինքի արդիւնքներ: Թող ընկերութեան կառավարիչները օրինակ առ- նեն Վ. Պոլի «Արարատեան» ընկերութիւնից:

Ժամանակ է մի նոր կեանք տալու Բագրուի «Մարդասիրական Ընկերութեանը»: Եթէ նրա կա- ուովարիչները չեն կարող, կամ այդ անելու համար բաւական ուժեր չունեն, — եթէ նրանց մէջ չը կան ընդունակ մարդիկ, ուրեմն, թող իրանք դուրս գան ասպարէզից և յանձնեն գործերի կառավա- րութիւնը թիֆլիսեցիներին. կամենում եմ ասել տեղափոխեն ընկերութեան կենտրոնը Թիֆլիս: Այստեղ կարելի է գտնել ինտելիգենցիայի ձյմարիտ ներկայացուցիչներ, որոնք գործով ապացուցեն, թէ իսկպակս ուժեր են: Կրանք ապացուցին, թէ կա- րող են վարել լրագրական, ամսագրական և դպրո- ցական գործեր, ստեղծեցին հայկական առանձին բնո՛ւ այստեղ միայն պակաս է մի այնպիսի հիմ- նարկութիւն, անկի ընդարձակ նպատակներով, որ պիտի են «Մարդասիրական Ընկերութիւնը»:

Սրբ իմ վերոյիշեալ առաջարկութիւնները նկա- տի առնվին, այն ժամանակ Բագրուի «Մարդասի- րական Ընկերութեան» կառավարիչներին պէտք է համարել բարեխիղճ գործիչներ, և ոչ որ իրաւունք չի պիտի ունենայ դատաւարանի նրանց: Միջայլէ Լազարեան

Ուրեմն դժուար է նախագրել, թէ ի՞նչով կը վերջանայ այդ հին կատարելագործեան նոր խաղը, որի հերոսը (կարծեմ վերջինը) Սայրի-փաշան է:

Հայկական խնդրի վերաբերութեամբ թիւրքաց կառավարութեանը յանձնարարականները միտաբան գրութեամբ կը պահանջեն վերանորոգական հետեւեայ գլխաւոր կէտերը Հայաստանի համար: 1) Քիւրքիան պէտք է այնպիսի քրիստոնէայ գլխաւոր նահանգապետ նշանակի, որի ընտրութիւնը հաւանութիւն տանայ և ազատով վի մեծ պետութիւնները ներկայացուցիչներին: 2) Պէտք է Հայաստանի չորս նահանգները կենտրոնական նահանգական խորհուրդը հաստատել: 3) Պէտք է ժամդարմարի կազմակերպել, որի քանակութիւնը բաւական լինի ներքին կարգը կատարելագույն պահպանելու համար: 4) Պէտք է քաղաքական և քաղաքային կատարել հաւասարութիւն տայ ամենքին առանձին դատաստանական և վարչական օրէնքները առաջ ուրոնք կը մշակեն նահանգական կենտրոնական խորհուրդից և որոնք պէտք է մեծ պետութիւնները ներկայացուցիչներին հաւանութիւնը ստանան: 5) Հայաստանի մէջ կրօնական կատարել համեմատութիւն պէտք է լինի: Այս կազմակերպութիւնը, որ վաղուց մտցրած է Կիւսնանի մէջ, արդէն աջողակ իր քարտուղիութիւնը:

Նորերում «Մասիս» լրագրի մէջ մի թղթականութիւն էր տպագրուած, որ արտասովետական սեղանի բոլոր լրագրիչներին մէջ և ամենքի վրա շատ ծանր տպաւորութիւն գործեց: Ահա այդ թղթականութեան բառացի թարգմանութիւնը. «Օրվայ հարցը ուսուցող զխաւոր հիւսնատու պ. Օրբերմիլիւրի մի սեղանի ընտելին արած յայտնութիւնն է: Թէ որովհետև քրիստոնէայ և մահմետական ազգաբնակչութիւնը հեռու է մնում նրանից, նա սխտեմասկարաբ կաշխատի առուս պաշտօնական մասնաշի միջոցով՝ հերքել Հայաստանի մէջ եղած սովի շարժումները: Նրբ նրա հետ խօսողը նրկանց, որ ազգաբնակչութեան ստանութեան պատճառը դէպի պ. Օրբերմիլիւր սովեայ ժողովուրդը չէ, որին երբէք չէր տրուում իր համար Ռուսաստանից ուղարկված օգնութիւնը, Օրբերմիլիւր սասց. Փուր սուտ էք ստու՞մ, Երզրումի մէջ երբէք ոչ մի սովեայ չէ եղել, և նա խոստացաւ իր այդ սասածը հաստատել ուսու պաշտօնական լրագրիչներին միջոցով:»

Որովհետև Երզրումի մէջ հաստատված սովեայներին օգնելու մասնաժողովը, անգլիական հիւսնատարները, հայկական առաջնորդարանը, անգլիական միսիոնարները և Վրանսիական հիւսնատար ու ժամափ եղան սովից տանջվող ամբողջին հաց և փող բաժանելով, ուրեմն հասկանալի է, որ իր թղթականութեան մէջ Օրբերմիլիւրի արած յայտնութիւնը չարագանջ ներդրեց հայ ազգաբնակչութեանը և հայ մտն լին, որ բոլորովին ցանկութիւն չունի բանակու սկսել հայերին մեծ բարերարութիւններ արած մի պետութեան ներկայացուցիչ հետ: Այսպէս թէ այնպէս, իրաւացի է թէ ոչ Երզրումի այդ թղթականութիւնը, այդպիսի տեղեկութեան երևալը անժամանակ է և փաստարկ Երզրումի ուսու ներկայացուցիչ անուան հաւմար:

*) «Воррегъ» լրագրի № 163-ի մէջ Երզրումից հաղորդած մի տեղեկութիւն տպագրուած էր սովի գոյութիւնը Հայաստանի մէջ: Սրդեք «Воррегъ» այն պաշտօնական լրագրից չէ, որի մասին խօսուած է:

ՀԱՅԱՍՏԱՆ *

Պ. ՊԼԻՔ, (նախկին խորհրդականն արտաքին գործոց նախարարութեան), վերստին խօսք առնելով լրագրի մէջ ինք ուրախ էր լսելով որ Պ. Կլատսթոն իւր բերնէն կը խօսեցրուն համար պատասխանատու չէր և այս երկրի մէջ ոչ ոք կրնայ չը ճանչիլ Պ. Կլատսթոնի խօսքերուն ծանրակշռութիւնը: Պ. Կլատսթոն վերջապէս իւր անհատական պատասխանատուութեան խնդիրը մինչև ցարդ բրածէն բողոքովին տարբեր կերպիւ ներկայացուց հասարակութեան: Ստուգելու ես այ միշտ զգացած եմ որ Ռուս-Փուրքական պատերազմին ժամանակ Պ. Կլատսթոնի բանախօսութիւններն ու գրվածները մեծ պատասխանատուութիւն թողած էին անոր վրա: Ս. յիւրաք. իմ պահպանողական բարեկամաց հետ շատ հակամէտ եմ Պ. Կլատսթոնի վրա թողուլ նորա արտասանած բանախօսութեանց այնտպիսի արդիւնքները: (Հ ա ա ն ու թ ե ա ն ա ղ ա կ ն ե ր ւ)

Մեր այս զիշերուան նստին մէջ Պ. Կլատսթոնի դիտարութեանց մին այս էր թէ իրմի պատերազմէն մինչև Լորտ Պիքնս-Ֆիլիտի նախարարութեան վերջին անգամ պաշտօնի անցնելուն ժամանակը, (1874-1875, միջոց մը, յորում գլխաւորապէս ազատականը իշխանութեան վրա էին), անդադար յանդիմանական ազդարարութիւնը ուղղուած էին Քիւրքիայ որպէս զիւր վարչութիւնը բարւոյն: Այս այնպիսի խօսք մ'է, որոյ վրա Պ. Կլատսթոնի հետ կրնամ վէճի մտնել: Քանիցս ըսուեցաւ, և Պ. Կլատսթոն այ լսեց, թէ այդպիսի յանդիմանական ազդարարութիւններ պարունակող գրութիւն չը կայ Անգլիոյ արտաքին գործոց պաշտօնատան մէջ. (այսինքն, ազատականը իշխանութեան վրա եղած ժամանակ, երբէք Փուրքիոյ բարեկամաց վրա են պնդած): Միշտ դժուար է ժխտական խօսք մ'ապացուցանել, ուստի առ այժմ սս միայն կրնամ որ 1862 թուականին, կամ այն միջոցները, Լորտ ձոն Ռուսիի կողմանէ Փուրքիոյ մէջ կրօնական ներողամտութեան խնդրոյն վրա գրուած մի քանի պաշտօնագրերէ դատ, ուրիշ ո՛ր է յանդիմանազիր մը չը կայ, որ իրիտանական կառավարութեան կողմանէ Փուրքիոյ ուղղուած լինի բարեկարգում պահանջելու համար: (Մ ա ի կ ը ր է ք, մ ա ի կ ը ր է ք): Կրնամ նաև յիշել որ, 1855-էն մինչև 1874, Պ. Կլատսթոն 14 տարի շարունակ կամ ելեւական նախարար և կամ արտաքին գործոց նախարար էր:

Պ. Կլատսթոնի մի խօսքը մեծ գոհութեամբ լսեցին նա ըսաւ որ եթէ Փուրքիա Պէրլինի դաշնագրին ինչ ինչ յողուածոց գործադրութեան համար ուրիշ կառավարութեանց քով ազդեցութիւն բանեցնելու իրաւացի պահանջ մ'ընէր Անգլիական կառավարութեան, այս վերջինը պատրաստ պիտի լինի միջնորդել: Բայց միև կողմէն Պ. Կլատսթոն շատ թեթեւ կերպիւ խօսեցաւ այն մեծ խնդրոյն վրա թէ Քիւրքիոյ նրկանամբ բունկան միջոցներ ՚ի գործ պիտի գրուին եթէ Ներսիսի վարիպետները չը գործադրէ: Սս պատասխանատուութիւն յանձն չը պիտի առնում ըսելով թէ բունկան միջոցներ պէտք է ՚ի գործ գրուին թէ ոչ: Սս այնպէս կը կարծեմ որ այս բանը պարագանքէն կախում ունի, և ոչ մի անհատական անգամ կրնայ դադարաւ մը յայտնել, ըստ որում պէտք եղած պաշտօնագրերը տակաւին ժողովոյն հարցը դուռած:

*) Նարեանկութիւն և վերջ:

«Ներսիսի համաձայնութեան գաղափարը ներկայ նախարարութեան շնորհիւ երևան չեկաւ: Լորտ Պիքնս-Ֆիլիտի նախարարութիւնն այլ այդ գաղափարն ունէր. և գայն ՚ի գործ դնելու համար, Պ. Կլատսթոնի արտայայտածին չափ փափաք ունէր: Սս մեծ դարձանամբ լսեցին Պ. Կլատսթոնի այն խօսքը թէ Անգլո-Փուրք պայմանագիրը Քաղղիոյ նախանձը գրգռած էր, և թէ Լորտ Պիքնս-Ֆիլիտի նախարարութիւնն այս մասին քանի մը կտոր պաշտօնագրեր գաղտնի պահած էր խորհրդարանէս: Այդ միջոցին բազմաթիւ Կապոյտ տետրակներ հրատարակեցան, և թէպէտ ես պատրաստուած չեմ ըսելու թէ Պ. Կլատսթոնի յիշածին պէս Քաղղիոյ նախանձն երևան հանող գրութիւնը չը կան, այսու ամենայնիւ կրնամ ըսել թէ այդպիսի պաշտօնագրոց վրա տեղեկութիւն չունիմ, և մեծ պիտի լինի դարմանքս եթէ այդ օրինակ գրութիւններ տեսնեմ: Անգլիական խորհրդարանէն պաշտօնագրեր ծածկած լինելու ամբաստանութիւնն յոյժ ծանր է, և անշուշտ այդ մասին ուրիշ աւթիւ ուշադրութիւն պիտի հրաւիրեմ: (Մ ա ի կ ը ր է ք, մ ա ի կ ը ր է ք): Քաղղիոյ զգացման գաղով, կրնամ յայտարարել թէ Քաղղիոյ հետ մեր համաձայնութիւնն առաջուան չափ կատարել էր, և չեմ յիշեր թէ Պ. Վատիսթոնն այս մասին ուրիշ մտք հրապարակային կամ անհատական յայտարարութիւն մ'ըրած լինի:

Պ. Կլատսթոն Արմենիոյ մասին ո՛ր է է բան մ'ընելու նկատմամբ կեցած դժուարութեանց վրայ խօսեցաւ, և այդ դժուարութեանց գոյութեան մասին տարակոյս չը կրնար լինիլ: Բայց ո՛չ հարկաւոր, ո՛չ ալ օգտակար էր որ Պ. Կլատսթոնն այդ դժուարութեանց վրայ խօսէր, զի եթէ անոնց դարման չը տարուի, արդիւնքը մեծ աղետ մը պիտի լինի: Կառավարութիւնը շփոթելիք բառ մ'անգամ արտասանել չեմ ուզեր, բայց պէտք է ըսեմ թէ Լորտ Պիքնս-Ֆիլիտի նախարարութեան պաշտօնէ քաշուէէ առաջ, ես յոյժ ազդուապէս զգացած էի թէ կեցած է այն ժամանակն, յորում հարկ անհրաժեշտ էր որ Անգլիա բան մ'ընէ Արմենիոյ նկատմամբ: (Մ ա ի կ ը ր է ք, մ ա ի կ ը ր է ք):

Ձը դիտեմ թէ պատուարժան երեսփոխանը կարգացած են Լորտ Պիքնս-Ֆիլիտի նախարարութեան կողմանէ ժողովոյս մատուցեայ պաշտօնագրերը, վերաբերութեամբ այս խնդրոյն Նիթէ կարգացած են, անշուշտ դիտած են թէ, այդ պաշտօնագրոց մէջ նկարագրուածին համեմատ, Փոքր-Ասիոյ վիճակն... ծանր էր, և թէ Սըր Հ. Լէյբրաի ջանքերը բողոքովին անյաջող կը լինէ: Նիթէ որ և է բան մը պիտի լինի, կը յուսամ թէ ներկայ կառավարութիւնն աւելի արագ կերպիւ պիտի գործէ: Փուրք վարչութեան բարեկարգման խնդրոյն վրայ շատ բաներ կրնամ ըսել, բայց պէտք է գոհանամ սս միայն դիտելով թէ Փոքր-Ասիոյ մէջ միշտ աճող զգացում մը կայ թէ այդ երկրին ժողովրդոց լրագրոյն բարեկամն Անգլիա է, և թէ նոքա Անգլիոյ ազդեցութեան կը սպասեն որ իրենց այդ դժուարութեանց և դժբաղդութեանց լուծում մը տրուի: Նիթէ արդէ նախարարութիւնն այս խնդրոյն ընթացից հետեւելով, միշտ ազդեցութիւն բանեցնէ այն ուղղութեամբ, տարակոյս չը կայ թէ որ մը գոհացուցիչ արդիւնք կրնայ ձեռք բերուիլ:

Պ. Կլատսթոն կրօնական կոյր հակամիտութեան մը խօսք ըբաւ, որ անշուշտ Քուրամ ցեղին հակամիտութիւնը պարտի լինիլ: Բայց գրեթէ ամեն հեղինակ համափա էր թէ Փուրք կառավարութիւնն, իւր ամեն

թերութեամբ հանդերձ, կրօնական աններողամիտ ոգի չունէր: Կրօնական խնդրով և միսիոնարական ձեռնարկներով զբաղող անձինք ամենէն առաջ խոստովանած են թէ Փուրք կառավարութիւնը կրօնական գործոց մասին ուրիշ բազում կառավարութիւններէ աւելի ներողամիտ է: Նրբ կրօնական աններողութեան մասին Փուրք կառավարութիւնն Արեւելեան բազմաթիւ մարմնոց հետ բաղդատեմք, կը տեսնեմք թէ կառավարութիւնը քաղաքային և կրօնական ազատութեան պաշտպան հանդիսացած է: (Օ, և հ ա ա ն ու թ ե ա ն ա ղ ա կ ն ե ր ւ) Բազմաթիւ երեսփոխանք դիտած պէտք է լինին Լատին և Յոյն ցեղերու միջև շարունակ տեղի ունեցած կռիւներն, որով Փուրք կառավարութեան հարկ անհրաժեշտ էր իրբև միջնորդ գործել այդ երկու ցեղերուն միջև: Աստի, ես անիրաւ կը դատեմ որ Պ. Կլատսթոն ըսէ թէ կրօնական աններողութիւնն արդէլ մ'էր Փուրք կառավարութեան բարեկարգման: Նիթէ Փուրքիոյ մէջ բարի կառավարիչք պաշտօնի կոչուին, կրօնական ո՛ր է է տեսակ աններողութիւն արգելք չը լինիլ անոնց բարի գործերուն:

Փուրքիոյ բարեկարգմանց գործին մէջ ծանր խնդիր մ'ալ դրամական խնդիրն է: Առանց դրամի ոչ ոք կրնայ բարւոյ վարչութիւն սպասել: Ներսիս համաձայնած լինի թէ ոչ, եթէ Փուրքիոյ համար բան մ'ընելու դիտարութիւն կայ, ըստ իս՝ միակ ձանբան քաղաքային վարչութեան բարեկարգմանը համար դրամ հայթայթել է:

Պ. Կլատսթոն ըսաւ նաև թէ միայն Ռուսական ջանիւք չէր որ Ներսիսի Փիւրքիոյ դաւառաց ողբայի իրողութիւններն յառաջ եկան: Բայց Պ. Կլատսթոն այն իրողութեանց վերաբերեալ շատ մը Կապոյտ ճետրակներ մտաւցած պէտք է լինի: Այն ժամանակուան դէպքերն յիշող ամեն ոք դիտէ թէ Չէնայէի զորավարը խժգժութեանց սկսելէն ամիսներ առաջ մասնախումբք միայն մէկ նպատակաւ կը գործէին, այն է Փուրքիոյ դէմ պատերազմ բանալու նպատակաւ: Աստի, ես կը պնդեմ որ Ռուսական գործունեութիւնն անմիջական պատճառն էր Պուրքական խժգժութեանց: (Մ ա ի կ ը ր է ք, մ ա ի կ ը ր է ք):

Վերջացնելով, հարկ կը համարիմ ապահովել մեր կառավարութիւնն որ եթէ պահպանողականը կարեւոր օգնէ ներկայ նախարարութեան, որպէս զի Փուրքիոյ գործոց կարգադրութիւնն յառաջ տանի, կրնայ վստահ լինիլ թէ մեր կողմէն որ և է ապօրէն արգելք չը պիտի ելնէ իւր գործողութեանց դէմ: (Մ ա ի կ ը ր է ք, մ ա ի կ ը ր է ք):

Վիճաբանութիւնը փակեցաւ. Պ. ձէյմս Պրասի առաջարկութիւնն ընդունուելով որ խնդրած էր թէ Հայոց խնդրոյն վերաբերեալ նոր պաշտօնագրերը խորհրդարանին հարցրուին:

(Մասիս)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ
Ս, ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 սեպտեմբեր: Պետական բանկի 50 տոմսով առաջին շրջանի արժէ 94 ռ. 50 կ., երկրորդ 92 ռ. 37 կ., երրորդ 93 ռ. 35 կ., չորրորդ 92 ռ. 37 կ., ներքին 100 առաջին փոխառութեան տոմսով արժէ 220 ռ. 75 կ., երկրորդ 216 ռ. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսով 90 ռ. 75 կ., երկրորդ 90 ռ. 75 կ., երրորդ 90 ռ. 75 կ., ոսկի 8 ռ.: Առևտայ 1 ռուբլ 1, օնգոնի վրա արժէ 24, օնգոնի 25 պէն, ֆարիդի վրա 260 շիբ. 50 սանտիմ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՐՈՒՆԻ

